ՔԱՐՈԶԽՈՍԱՔԿԱՆ

Տ. ԱՐՇԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ ԽՈՍՎԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՀԱՄԲԱՐՁՄԱՆ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ

(29 մայիսի, 2014 թ.)

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«Եւ ահաւասիկ ես ընդ ձեզ եմ՝ զամենայն աւուրս,
մինչեւ ի կատարած աշխարհի»
(Մատթ. ԻԸ. 20):

Սիրելի՛ քոյրեր եւ եղբայրներ,

Այս խոսքերը քաղված են Մատթեոսի Ավետարանից. խոսքեր, որոնք հնչել են Քրիստոսի՝ մեր Տիրոջ շուրթերից, երբ կատարվելու էր Համբարձման հրաշազարդ իրադարձությունը:

Ավետարանը պատմում է, թե Տիրոջ մատնությունից, չարչարանքներից ու խաչելությունից ինչպես էին ահաբեկվել Փրկչի աշակերտները: Իրենց Վարդապետի՝ Յիսուս Քրիստոսի խաչելությունը, թաղումը եւ մահը որեւէ ձեւով չէր համընկնում Մեսիայի մասին նրանց պատկերացումներին ու ակնկալիքներին: Ասված մահացավ... սա ուղղակի մի դատապարտություն էր: «Մի՞թե Ասված ամենազոր չէ, թե՞ Հիսուսը, ում իրենք հավատացին, Աստծո Որդին ու սպասված Մեսիան չէր»: Մարկոս Ավետարանիչը, հիշելով աշակերտներին, ասում է. «Երկյուղում էին, քանի որ ահավոր սարսափի մեջ էին գտնվում» (Մարկ. ԺՁ. 8):

Տիրոջ հրաշափառ հարությունը մխիթարություն բերեց առաքյալներին, սակայն տակավին երկյուղը եւ ապագայի հանդեպ անորոշությունը խոր արմատներ էր նետել նրանց հոգիների մեջ: Ահա ինչպես է Մատթեոս ավետարանիչը նկարագրում աշակերտների հանդիպումը Հարուցյալ Տիրոջ հետ Գալիլիայում, համբարձումից առաջ. «Իբրեւ տեսին զնա, երկիր պագին նմա եւ ոմանք յերկուացան»(Մտթ. ԻԸ 17): Այո, Սուրբ Հարությունից հետո բազում անգամներ հանդիպելով Քրիստոսին, լսելով նրա մխիթարիչ պատգամները, շոշափելով նրա վերքերը ու համոզվելով, որ իրապես հարություն է առել, տակավին երկյուղած էին:

Հարուցյալ Քրիստոս Համբարձումից առաջ Իր շուրջ հավաքեց Իր հուսալքված աշակերտներին, պատգամներ տվեց ու մխիթարություն պարգևեց նրանց սրտերին՝ ասելով. «Ես ձեզ հետ եմ, մինչև աշխարհի վախճանը»:

Այսօր մեր հայրերը Սուրբ Եկեղեցու ընթերցվածքների մեջ այս պատգամն են զետեղել Սուրբ Համբարձման տոնի առիթով մատուցվող Պատարագի:

Այսօր մեր Սուրբ Եկեղեցին Ն.Ս.Օ.Տ.Տ. Ամենայն Հայոց Գարեգին Բ. Կաթողիկոսի եւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսի օրհնությամբ եւ մասնակցությամբ Մայր Աթոռ Ս. Էջմիածնում նշում է Համբարձման տոնը: Տոն, որի պատգամն ամփոփված է Տիրոջ՝ մեզ հետ մշտական ներկայության մեջ. «Ես ձեզ հետ եմ, մինչև աշխարհի վախճանը», - ասում է Քրիստոս: Իսկապես, աշխարհը ցնցող, աննախադեպ մի հայտարարություն է սա: Մեծագույն մտածողներից մեկն ասում է, որ միջին վիճակագրությամբ մարդը երկու քառորդ ժամվա ընթացքում բազում փոփոխությունների է ենթարկվում. փոխվում են նրա տրամադրությունը, հարաբերությունները, փոխվում է վերաբերմունքը, անգամ՝ հայացքները: Եւ այս համատարած փոփոխությունների մեջ հնչում է Քրիստոսի անփոփոխ, կայուն եւ հավիտենական բարեկամության կոչը. «Ես ձեզ հետ եմ, մինչև աշխարհի վախճանը»: Աշխարհը փոխվում է, բայց աշխարհի փոփոխությունը առաջին հերթին պայմանավորված է մարդու փոփոխությամբ:

Կյանքում հաճախ բարեկամությունը եւ թշնամությունը քայլում են կողք կողքի եւ դժվար են տարբերակվում: Հաճախ փշերը մարդկանց մատուցվում են բամբակների մեջ, թույները՝ մեղրի ու քաղցրավենիքի: Քրիստոս, սակայն, անդավաճան է Իր բարեկամության մեջ եւ վճռական՝ Իր հայտարարության մեջ. «Ես Ձեզ հետ եմ մինչև աշխարհի վախճանը»: Նա մեզ հետ է թե մեր ուրախության, թե՛ նեղության, թե՛ հուսահատության եւ թե՛ խանդավառության մեջ: Իսկ եթե Աստված մեզ հետ է, ո՞վ կարող է մեզ հակառակվել:

Այս աշխարհում Քրիստոսի առաքելության շարունակողը, մարդկանց հետ լինելու մեծ եւ սքանչելի առաքելությունն իրականացնողը մեր ժողովրդի կյանքում դարեր շարունակ եղավ մեր Սուրբ Եկեղեցին իր բոլոր կառույցներով, նվիրյալ հոգեւորականներով ու սպասավորներով: Մեր Եկեղեցին Ավարայրում քաջամարտիկների հետ եղավ, եղավ Սարդարապատում, որին շինականների, քաղաքական ու մտավորական գործիչներների հետ իրենց մասնակցությունը բերեցին բազում նվիրյալ եկեղեցականներ: Այսօր նաեւ մեր Եկեղեցու անսասանության, առաքելության արդյունավորման կարեւորագույն տոնն է: Քիչ հետո մենք կատարելու ենք Հայրապետական մաղթանք այս Սուրբ Սեղանի առջեւ՝ աղոթելով Տիրոջը, որ մնայուն հաջողություն պարգեւի մեր Եկեղեցու առաքելությանը, արգասավոր դարձնի մեր եկեղեցականների ջանքերը՝ ուղղված մեր ժողովրդի սպասավորությանն ու բարօրությանը:

Սիրելի՛ քույրեր եւ եղբայրներ, այսօր նաեւ հիշատակն է հայրապետական աթոռի՝ Ս. Էջմիածին տեղափոխության:

Սրանից հիսուն տարի առաջ՝ 1951 թվականին, երջանկահիշատակ Գեւորգ Զ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի եւ Մեծի Տանն Կիլիկիո երջանկահիշատակ Գարեգին Ա. Հովսեփյանց Կաթողիկոսի եղբայրական սերտ զործակցությամբ հիմքերը դրվեցին, որ նշվի Ս. Աթոռի փոխադրության 500-ամյակը: Խոսքերն ավելորդ են, երբ խոսում են փաստերը: Նրանց եղբայրական սերն ու ջերմությունն ամրապնդված էր արդեն երջանկահիշատակ նախորդների ջանքերի եւ նվիրվածության շնորհիվ:

Այսօր Ամենայն Հայոց Կաթողիկոսի եւ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսի ներկայությունն ու մասնակցությունն այս սրբազան արարողությանն ինքնին վկայությունն է Տիրոջ՝ մեր ժողովրդի հետ լինելու մնայուն խոստումի իրագործման:

Մեր Եկեղեցին իր մեծ առաքելությամբ, ժողովրդի կյանքում իր վճռական ներկայությամբ պատրաստակամություն է ցուցաբերում՝ համաձայն Քրիստոսի խոստման՝ լինել ժողովրդի հետ:

Արդ, սիրելի՛ քույրեր եւ եղբայրներ, միասնաբար աղոթենք մեր Եկեղեցու պայծառության, նրա առաքելության արդյունավորության համար, աշխարհի բոլոր ծագերում՝ բոլոր հանգրվաններում ու պարագաներում:

Թո՛ղ Աստված օրհնի ու զորացնի մեր ժողովրդի զավակներին, երկար ու քաջառողջ կյանք պարգեւի Ամենայն Հայոց Հայրապետին՝ ծաղկուն պահելով հայրապետական զավազանը, Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսին՝ ուժ, կորով եւ կարողություն իր նվիրյալ ծառայության մեջ՝ ի նպաստ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության մեր հայացքն ուղղենք Երուսաղեմի Հայոց Պատրիարքություն՝ աղոթելով փերունակոխ սրբավայրերը նվիրումով պահապանող մեր եղբայրների համար՝ Ամենապատիվ Պատրիարք Սրբազանի առաջնորդությամբ, աղոթենք Կ. Պոլսի Հայոց Պատրիարքության համար, մեր թեմերի, առաջնորդությունների, մեր համայնքների զորացման եւ հզորացման համար:

Տիրոջ սերը, օրհնությունն այսօր եւ հավիտյանս ամենքիս հետ այժմ եւ միշտ եւ հավիտյանս. ամեն: